

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 7 Ապրիլ. Երոսաղամի նոր Պապական Նուիրակ Արք. Ատուլֆո Տիտո Իլանայի իր պաշտօնը ստանձնելուն առիթով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երկուշաբթի, 11 Ապրիլ. Ռամալլայի Պէյթէլ Զինուորակայեանի մէջ քրիստոնեաներուն արտօնութիւն տրամադրող գրասենեակի պատասխանատու Տիար Շատի Սալահ՝ ընկերակցութեամբ իր օգնականի, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Չորեքշաբթի, 20 Ապրիլ. Առաւօտեան ժամը 10:30-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Զատկական շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտին, ապա Լատինաց Ամենապատիւ Պատրիարքին եւ Միաբանութեան:

Չորեքշաբթի, 27 Ապրիլ. Ս. Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 10:00-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան Զատկուայ շնորհաւորանքի եկան Ֆրանչիսկեան Քիւսթոտը՝ իր միաբաններով: Ժամը 11:00-ին, Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան շնորհաւորելու եկան նաեւ Լատինաց Պատրիարք՝ Ամեն. Տ. Փիեր-պաթիսթա Փիցաբալա՝ իր միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը, կէսօրէ ետք, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Զատկական շնորհաւորանքի գնաց Սուրբ Երկիր մէջ Հայերու հետեւակ՝ Ղպտի, Ասորի, եւ Հապէշ եկեղեցիներուն:

Հինգշաբթի, 28 Ապրիլ. Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Զատկական շնորհաւորանքի գնաց Սուրբ Երկիր

Պապական Նուիրակ Արք. Ատուլֆո Տիտո Իլանայի:

Երկուշաբթի, 2 Մայիս. Երոսաղէմի Ղպտոց եպիսկոպոս Գերշ. Տ. Անտոնիոս Արքեպիսկոպոս քանի մը միաբաններով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը Արժանթինէն Սուրբ Երկիր ժամանած ուխտաւորներ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը, Իսրայէլի Անկախութեան տօնի առիթով Երոսաղէմի գլխաւոր ոստիկանապետի կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան եւ խօսեցաւ յանուն Քրիստոնեայ համայնքներու:

Նոյն օրը, Իսրայէլի Անկախութեան 74-րդ տարեդարձին առիթով, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան ներկայ գտնուեցաւ նախագահական պալատին մէջ տըրուած հիւրասիրութեան:

Երկուշաբթի, 9 Մայիս. Զատկական տօներու առիթով Երոսաղէմի քաղաքապետ Տիար Մոշէ Լէոն այցելեց Ֆրանչիսկեաններու Ս. Փրկիչ վանք եւ հանդիպում ունեցաւ քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերու հետ: Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան եւ Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Նոյն օրը, Թել-Ավիվի մէջ, Երկրորդ Համաշխարհային պատերազմի յաղթանակի առիթով Ռուսիոյ դեսպանին կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի:

Երկուշաբթի, 9 Մայիս. Առաւօտեան, Վատիկանէն Սուրբ Երկիր ժամանած Քարտինալ Ֆի-

լոնի, ընկերակցութեամբ Երուսաղէմի Լատին Պատրիարք Ամեն. Տ. Փիերպաթիսթա Փիցաբալայի, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Նոյն օրը, կէսօրէ ետք, Քարտինալ Ֆիլոնի պաշտօնական մուտք ունեցաւ Ս. Յարութեան տաճարէն ներս, որուն Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ՝ Աւագ Թարգման Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Նոյն օրը, «Իմ կրօնի մէջ բռնութիւն չկայ» խորագիրը կրող Իսրայէլի կրօնական պետերու խորհուրդի 12-րդ համագումարին Հայֆայի մէջ Ս. Աթոռոյս ներկայացուց Դիւանապետ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Երեքշաբթի, 31 Մայիս. Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրն ընդունեց Ֆրանսական France TV2 հեռուստակայանի երկու աշխատակիցները, որոնք Սուրբ Երկրի մէջ Հայոց ներկայութեան մասին ֆիլմ պիտի պատրաստէին:

Հինգշաբթի, 2 Յունիս. Էլիզապէթ Բ. Թագուհիի ծննդեան 96-րդ տարեդարձին առիթով Մեծ Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոսին կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 10 Յունիս. ԱՄՆ պետքարտուղարի օգնական-տեղակալ Տիար Հատի Ամր՝ ընկերակցութեամբ Երուսաղէմի Ամերիկեան դեսպանատան պաշտօնեաներու այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երկուշաբթի, 13 Յունիս. Russian Mission-ի կողմէ իրենց եկեղեցւոյ տօնին առիթով կազմակերպուած ընդունելութեան ներկայ գլխաւորուեցաւ Ս. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Նոյն օրը երեկոյեան, Ֆրանչիսկեան Միաբանութեան պաշտպան՝ Ս. Անտոն Պատովացիի տօնին առիթով Ֆրանչիսկեաններու Ս. Փրկիչ վանքին մէջ մատուցուած պատարագին եւ ապա տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Երեքշաբթի, 14 Յունիս. Հայաստանի Հան-

րապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի կողմէ կազմակերպուած «Մշակ»-ի հիմնադրումի 150-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի առաջին օրուայ երկրորդ նիստին, որպէս Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ եւ «Սիոն» ամսագրի գլխաւոր խմբագիր՝ զեկոյցով հանդէս եկաւ Հոգ. Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան: Եռօրեայ հանդիպումներու ընթացքին ուշարժան զեկուցումներով հանդէս եկան քսանէն աւելի հայրենաբնակ եւ սփիւռքաբնակ գիտնականներ եւ ուսումնասիրողներ:

Նոյն օրը, Ռուսիոյ Անկախութեան տօնին առիթով Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպանին կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գլխաւորուեցաւ Հոգ. Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Երեքշաբթի, 20 Յունիս. Երուսաղէմ գլխաւոր Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոսարանին մէջ երկար տարիներ աշխատած, ծագումով հայ՝ Տիար Միշէլ Զամպիլի պատուին Ընդհանուր Հիւպատոսին կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան եւ Դիւանապետ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 30 Յունիս. Ամերիկայի Անկախութեան տօնին առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան «Պաղեստինեան բաժնի» ղեկաւարին կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 4 Յուլիս. Հայաստանէն ժամանած երգիչ՝ Արա Մարտիրոսեան այցելեց պատրիարքարան եւ հանդիպեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան հօր հետ:

Երկուշաբթի, 18 Յուլիս. Սուրբ Երկիր ժամանած ՀՀ Ազգային ժողովի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Տիար Վահան Նարիբեկեանի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Չորեքշաբթի, 24 Յուլիս. Կուշ Հացիոնի նոր զինուորապետ՝ Տիար Նապիլ Թաֆէշ, ընկերակցութեամբ իր օգնականներու, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: